

**«ԽԱՌԸ» ԼԵԶՎԱՇԵՐՏԵՐԸ Ջ. Գ. ԲԱՅՐՈՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԵՎ  
ԳՐԱՆՅ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ըստ «Չայլո Հարոլդի  
ուխտագնացությունը» պոեմի և «Մանֆրետ» դրամայի)**

*Ջ.Գ.Բայրոնի բանաստեղծական բառապաշարի մի զգալի մասն են կազմում, այսպես կոչված, խառը բառաշերտերը, որոնք ներառում են թե՛ հունա-հռոմեական, թե՛ աստվածաշնչյան լեզվաշերտերը: Բազմաթիվ օրինակներով վերլուծվում են նախ հունա-հռոմեական (միֆոլոգեմային), ապա աստվածաշնչյան ծագում ունեցող լեզվական միավորները: Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում հայերեն թարգմանությանը՝ փորձելով գտնել համարժեքության եզրեր: Առանձնացվել և հանգամանորեն վերլուծվել են այն դեպքերը, երբ բնագրի և թարգմանության միջև անհամարժեքություն կա: Արտահայտվում է նաև այն տեսակետը, որ ժամանակի ընթացքում տվյալ բառը, բառակապակցությունը կամ միֆոլոգեմը կարող է ձեռք բերել նոր իմաստ և հնչողություն:*

***Բանալի բառեր.** բառապաշար, լեզվաշերտ, բառակապակցություն, արտահայտչամիջոց, առասպելաբանություն, միջնադարյան, գուգադրական վերլուծություն, միֆոլոգեմ, արքետիպ, փոխակերպում*

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Գ.Բայրոնի պոեզիայի անքակտելի մասը կազմող հունա-հռոմեական առասպելաբանությունից սերված միֆոլոգեմներն ու միֆոլոգեմային կապակցությունները, ինչպես նաև աստվածաշնչյան (սակրալ-արքետիպային) հասկացությունները, պետք է դիտել, մի կողմից՝ որպես բանաստեղծի (սուբյեկտիվ) ինքնագիտակցման, իսկ մյուս կողմից՝ նրա գաղափարագեղագիտական հայեցակերպի, և, ընդհանրապես, աշխարհընկալման կարևորագույն միջոց:

Բայրոնի բանաստեղծական բառապաշարի մի սովոր մասն են կազմում, այսպես կոչված, «խառը» լեզվաշերտերը (միֆոլոգեմա-արքետիպային կամ «երկշերտ» միավորներ, որոնք ներառում են և՛ հունա-հռոմեական, և՛ աստվածաշնչյան լեզվաշերտերը): Բերենք օրինակներ, նախ «Չայլո Հարոլդից».

A Cherub-Hydra round us dost thou gape...(I – LXV)

Գ-ու կյանքում հիդրա, քերովբե անբիծ... (I – 65)

(ընդգծումը մերն է՝ Ե.Վ.):

Հին հունական առասպելից ավանդված հիդրայի և աստվածաշնչյան քերովբեի միացման այս ուշագրավ պատկերը հայերենում, թերևս, կարելի էր թարգմանել պարզապես «հիդրա-քերովբե» կապակցությամբ (հարագատ մնալով բնագրին և պահպանելով բնագրային «օքսիմորոն» դարձույթը), ինչը հայ թարգմանիչը (Հ. Սևան) չի արել իր ընտրած «անբիծ» որոշիչ պատճառով, որը վերաբերում է միայն քերովբեին, մինչդեռ գծիկով միացած «հիդրա-քերովբե»-ի պարագայում, «անբիծը» կվերաբերեր երկուսին էլ: Ռուսերեն թարգմանիչը (Վ. Լևիկ) ընտրել է այլ ուղի՝ "Вампир с улыдкой херувима ясной" (Байрон, 1985:141): Առանձին-առանձին, «հիդրա»-ն և «քերովբե»-ն լայնորեն շրջանառվում են թե՛ անգլերենում, թե՛ հայերենում: XIX-XXդդ. բանաստեղծական երկերում, դրանք հանդես են գալիս, առավելապես, որպես միֆոլոգեմներ, կայուն բառ-հասկացություններ, որոնք, որպես այդպիսիք, կարող են ունենալ ինչպես

ավանդված կամ փոխանցված հասկանիչներ (օրինակ, «բազմագլխյան»՝ հիդրայի, «վեցթևյան»՝ քերովբեի համար), այնպես էլ սուբյեկտիվ-հեղինակային բնութագրումներ:

Long ere the first loud trumpet's note is heard... (I – LXXII)

Փողի հնչեցման դեռ կա ժամանակ... (I – 72)

«Փողը» միֆոլոգեմ է, որն առկա է թե՛ հունա-հռոմեական առասպելներում, թե՛ Աստվածաշնչում: Անտիկ առասպելներում «փող» (շեփոք) փչելը համարվել է ինչ-որ ժամանակի կամ գործողության սկիզբ կամ ավարտ: Փող են հնչեցրել պատերազմի կամ որսորդության ժամանակ, նաև՝ հանդիսավոր տոնախմբություններին: «Փողն» այս իմաստով պահպանվել է նաև Աստվածաշնչում. «Նրանք կարող են լեռը բարձրանալ միայն այն ժամանակ, երբ ... փողի ձայնը երկար հնչի» (Ելք 19:13), «...Տիրոջը նուիրաբերումը մի սուրբ տօն, որ շեփոքներով է ազդարարում» (Ղևտ.23:24), «Յիսուներորդ տարուայ եօթներորդ ամսի տասներորդ օրը շեփոք հնչեցնելով կ'ազդարարէր...» (Ղևտ. 25:9), «Եւ եօթը հրեշտակները, որուն էին եօթը փողերը, պատրաստուեցին դրանք հնչեցնելու» (Հայտն. 8:6) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե.Վ): Ընդ որում, ուշագրավ է, որ «Չայլդ Հարոլդ»-ի հայերեն թարգմանիչը նախընտրել է «փողի հնչեցման» ձևը՝ «փող հնչեցնել» կամ «փող հնչեցնելուն» ձևին, սակայն, պահպանել է *փողի* հետ գոյականաբար կիրառված *հնչեցման* բառաձևը, որն Աստվածաշնչում միշտ հանդես է գալիս «փող»-ի հետ՝ կազմելով բայական հարադրություն: Անգլերենում, ինչպես և հայերենում, կան «փող» միֆոլոգեմով և որևէ բայով կառուցված մի շարք հարադրություններ ու բառաբարդումներ («փող հնչեցնել», «փող հարել», «շեփոքել», «շեփոք հնչեցնել» և այլն, անգլ.՝ "Sound trumpets", "blow trumpets", etc.), որոնց ստույգ արքեսիպելը (հունա-հռոմեական, թե՞ աստվածաշնչյան), ուղղակիորեն հնարավոր չէ մատնանշել:

Is the spot marked with no colossal bust?

Nor column trophied for triumphal show?(III – XVII)

Կորավ կիսանդրին վեհ ու փառահեղ

Եվ սյունն հաղթության... (III – 17)

«Սյունն հաղթության» բառակապակցությունը, հունա-հռոմեական կամ այլ մշակույթներից սերված միֆոլոգեմ-դարձված է: Բուն միֆոլոգեմը «սյունն» է, որպես երկնքի ու երկրի միջև ուղղահայաց կապի խորհրդանիշ: «Հաղթության» մակդիրը նրան տրվել է ի հաստատումն այն բանի, որ երկնքի հետ կապը նրան դարձնում է անպարտելի: «Սյուն» միֆոլոգեմը հանդիպում է ոչ միայն բանահյուսական ստեղծագործություններում<sup>1</sup>, այլև հունական առասպելներում (քարացած Նիոբեն) և Աստվածաշնչում. «Գովտի կինը ետ նայեց ու դարձաւ աղէ արձան» (Ծննդ. 19:26), «Աստուած ցերեկը նրանց առաջնորդում էր անպի սիւնով..., իսկ գիշերը՝ հրէ սիւնով...» (Ելք 13:21), «Ով յաղթի, նրան իմ Աստծու տաճարին սիւն պիտի դարձնեն...» (Հայտն. 3:12) և այլն:

But Thou, exulting and abounding river!

Making thy waves a blessing as they flow

Through banks whose beauty would endure forever

Could man but leave thy bright creation so,

Nor its fair promise from the surface mow

With the sharp scythe of conflict, - then to see

Thy valley of sweet waters, were to know

Earth paved like Heaven – and to seem such to me,  
Even now what wants thy stream? – that it should  
Lethe be. (III – L)

Բայց շուայլ ես դու, գե՛տ իմ թափանցի՛կ,  
Ջրերդ են բերում ափիդ օրհնություն.  
Այն պիտի մնար հավերժ գեղեցիկ,  
Թե մարդ ձեռք չտար, թե ծաղկունքդ անհուն  
Չհնձեր կովի մանգաղն արնագույն,  
Այնժամ քո կապույտ հովիտն աստղացող  
Կթվար երկինք իմ ջահել հոգուն,  
Թե Լետան քեզ տա մոռացման մի շող,  
Ինձ կզգամ հիմա դրախտում դյութող: (III – 50)

Եթե «Ջրերդ են բերում ափիդ օրհնություն» բանատողը վերածենք դարձվածի, ապա կունենանք «օրհնության ջուր» կամ «օրհնած ջուր» դարձվածը: Բնագրին ավելի մոտ է ռուսերեն թարգմանությունը. "Источник жизни для своей страны" (Байрон, 1985:193): «Կովի արնագույն մանգաղ»-ը, կամ պարզապես, «Կովի մանգաղ»-ը, միֆոլոգեմային դարձված է, որի աստվածաշնչյան արքե-տիպը, կարծում ենք, հետևյալն է. «Եվ նա, ով նստել էր ամպի վրայ, շարժեց իր գերանդին երկրի վրայ ու հնձեց երկրի բոլոր բնակիչներին» (Հայտն. 14:16):<sup>2</sup>

Թե հայերենի, թե՛ անգլերենի գործուն եզրույթներից է հին հունական «Լետա» (=Լեթա) գետ-միֆոլոգեմն՝ իր «մոռացության» որոշչով: Այս գետն իր հատկանիշներով սերում է ոչ միայն հին հունական առասպելներից, այլ ունի նաև աստվածաշնչյան արքետիպ. մասնավորապես, նրա «օրհնաբեր» կամ «կենաց աղբյուր» լինելը, կարծում ենք, աստվածաշնչյան դրախտարուխ գետերի (Ծննդ. 2:10-14) բանաստեղծական վերհուշն է:

«Մանֆրեդի» 1-ին արարի, 2-րդ տեսարանում, ևս, ունենք «խառը» տիպի կապակցություններ ու մակրոավորումներ, ինչպես նաև լեզվաոճական ու լեզվաարտահայտչական այլև այլ միջոցներ: Օրինակ. "Till the past be gulfd in darkness"-«Զանի անցյալը մթության վիհը չի խորասուզվել» (առասպելական սանդարամետի, հունա-հռոմեական Հադեսի կամ աստվածաշնչյան դժոխքի բանաստեղծական պատկեր-վերհուշը), "...white and sulphury, / Like foam from the roused ocean of deep Hell"- «Ճերմակ, ծծմբոտ, որպես փրփուրը / Խորունկ դժոխքի ալետանց ծովից» («...նա նրանց պիտի գցի կրակի և ծծմբի ծովի մեջ...», Հայտն. 20:9):

(ընդգծումները մերն են՝ Ե.Վ.):

Բերենք օրինակներ «Մանֆրեդի» 2-րդ արարի, 3-րդ տեսարանից. "And mortals dared to ponder for themselves, /To weigh kings in the balance, and to speak /Of freedom, the forbidden fruit". - «Եվ աղամորդիք հանդգնում էին իրենք մտածել, /թագավորներին կշեռքում կշռել,/ Եվ ազատության մասին խոսք անել - արգելված պտուղ»:

Հայերեն թարգմանությունում միֆոլոգեմային է (=արքետիպային) կշեռքը, որի հետ է կապվում նաև կշռելը (հունական դիցաբանությունում Նեմեսիսի հատկանիշներից մեկը՝ հավասարակշռելը): Ասվածին պետք է հավելել, որ նշյալ տեքստում, վրեժի աստվածուհու՝ Նեմեսիսի, կամ, այսպես կոչված, Գիշերվա դստեր բերանում, «կշեռքն» ու «կշռելը», ոչ թե արդարություն որոնելու, այլ վրեժ լուծելու երանգ ունեն, և, այս իմաստով, անշուշտ, գուրկ են առասպելին հատուկ

դոզմատիկ բնույթից (բնագրում ունենք հենց հավասարակշռել–“weigh in the balance” իմաստը): Կշեռքը (կշռելը) իր արքետիպն ունի ոչ միայն հին հունական առասպելներում, այլև Աստվածաշնչում. «Եւ սա է այդ բանի մեկնութիւնը. ՄԱՆԷ՛ Աստված չափեց քո թագաւորութիւնը եւ վերջ տուեց դրան. ԹԵԿԷ՛Ղ՝ կշեռքով կշռուեցու պակաս եղաւ. ՓԱՐԷ՛Ս՝ քո թագաւորութիւնը բաժանուեց եւ տրուեց մարերին ու պարսիկներին» (Դանիէլ 5:26-28), «Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջեւ, բայց արդար կշեռքը հաճելի է նրան» (Առակ. 11:1), «Եւ տեսայ ահա մի սեւ ձի. եւ ով նստել էր նրա վրայ, իր ձեռքին կշեռքուն էր» (Հայտն.6:5) և այլն: Ինչ վերաբերում է «արգելված պտուղ» արքետիպին, ապա այն զուտ աստվածաշնչյան է և վերաբերում է բարու և չարի իմացության կամ գիտության ծառին (Ծննդ.2:9,17), որը, Բայրոնի հերոսը՝ Նեմեսիսը, համեմատում է արգելյալ ազատության հետ: Ահա թե ինչպես է հնագույն միֆոլոգենը, նոր ժամանակներում կիրառվելով գաղափարագեղագիտական այլ իրավիճակում, բառին կամ բառակապակցությանը հաղորդում ավանդական արքետիպից տարբեր իմաստ և այն կապում «ազատություն, ազատ խոսքի իրավունք» հասկացության հետ:

«Մանֆրեդի» 2-րդ արարում հանդիպում ենք բազմաթիվ «խառը» տիպի մակդրավոր կապակցություններ<sup>3</sup>. օր.՝ "Thy garb and gait bespeak thee of high lineage" - «Հագուստ ու տեսքը հայտնում են, որ դու բարձր տոհմից ես»: Տոհմն, անշուշտ, միֆոլոգեն է, որն ընդունել է աստվածներին ընծայվող մակդիր՝ բարձր: Այն լայնորեն շրջանառվում է թե՛ հունա-հռոմեական, թե՛ աստվածաշնչյան և թե՛ հնդիրանական արեալի առասպելներում ու գրույցներում, որտեղ գործողությունների և սյուժեի ծավալման համար շատ կարևոր նշանակություն ունի հերոսի տոհմը կամ ծագումը:

"My way of life leads me but rarely..." - «Քիչ է պատահում, որ կյանքիս ուղին առաջնորդե ինձ...» բանատողում, առաջին հայացքից, սրիմորոշով «կյանքիս» գոյականը թվում է «սովորական» որոշիչ, այլ ոչ թե այլաբանական նշանակությամբ օժտված մակդիր. այսուհանդերձ, այն, ըստ էության, միֆոլոգեն է: Ե՛վ «կյանքը», և՛ «ուղին»,<sup>4</sup> բազմաթիվ առասպելների, հեքիաթների և սրբազան տեքստերի մեջ հանդես են գալիս որպես միջուկ (առանցք), որի շուրջ հյուսվում է որևէ առասպել կամ միստիկ նշանակություն ունեցող սուրբ տեքստ: Ուստի, նման մակդրավոր կապակցությունները, փաստորեն, ավանդված են հնուց և օժտված են առասպելական լեզվամտածողությամբ:

'Or the rose tints which summer's twilight leaves,/ Upon the lofty glacier's virgin snow..." - «Կամ վարդ երանգը, որ ամառային արևամուտը / Թողնում է բարձր սառցալեռների կույս ձյունի վրա», բանատողերում ունենք երկու գոյականական մակդիր՝ «վարդ» և «կույս», որոնցում միֆոլոգենային իմաստը «նահանջել» է (կամ, ավելի ճիշտ, զուգորդվելով «երանգի» և «ձյունի» հետ, հանդես է գալիս նորիմաստ կիրառությամբ), սակայն, հենց այդ նախնական միֆոլոգենային (սակրալ) իմաստն է, որ թույլ է տալիս այդ բառերին հանդես գալ այլաբանական-փոխաբերական նշանակությամբ, ընդամից որոշակիորեն սրբագործելով այդ առարկաները (=մակդրակիրները): Իսկ այն, որ «վարդը» և «կույսը» եղել են միֆոլոգեններ և ունեցել սրբազան նշանակություն, վկայում են հունա-հռոմեական առասպելները և աստվածաշնչյան, բանահյուսական ու հեղինակային շատ ստեղծագործություններ: Նշենք, թեկուզ, այն փաստը, որ վարդը ձոնված է եղել Աֆրոդիտե աստվածուհուն, իսկ կույսը, որպես աստվածներին ընծայված կամ զոհի հատկանիշներով օժտված սուրբ էակ, արժանացել է հատուկ

մեծարանքի թե՛ հեթանոսական, թե՛, հատկապես, քրիստոնեական ավանդույթում<sup>5</sup>:

«Մանֆրեդի» 3-րդ արարից բերենք «խառը» տիպի մակդրավոր կապակցությունների ցայտուն օրինակներ, որոնք ունեն և՛ հունա-հռոմեական և՛ աստվածաշնչյան արքետիպեր.

...I should deem / The golden secret, the sought “Kalon”, found,... (Act III, scene I)

Գուցե կարծեի, թե գտնված է ոսկի գաղտնիքը:

Այնքան փնտրված «Բարձրը»... (արար 3-րդ, տեսարան 1-ին)

Պետք է ասել, որ «գաղտնիքը», թե՛ հունա-հռոմեական առասպելաբանությունում, թե՛ աստվածաշնչյան տեքստերում, կապվում է սրբազան խորհուրդների և աստվածայինի հետ: Մանֆրեդի ասած «ոսկի գաղտնիքը», իհարկե, ունի իր արքետիպը վերոնշյալ համակարգերում, սակայն, կարծում ենք, որ այն, գլխավորապես վերաբերում է միջնադարյան ալքիմիական գիտությանը, որն օգտագործելով ինչ-ինչ «գաղտնի» հնարքներ, փորձում էր հասարակ մետաղը փոխել ոսկու: Ոսկու ստացման ալքիմիական այս եղանակն է («ոսկի գաղտնիքը»), որ Մանֆրեդի խոսքը պարուրում է գրեթե անզգալի, «թաքուն» երգիծանքով: Հենց այս երգիծական տոնայնությամբ է, թերևս, պայմանավորված այն հանգամանքը, որ «ոսկի գաղտնիք» կապակցությունն այժմ ձեռք է բերել իմաստային ու հուզաարտահայտչական նոր երանգ՝ վերստին հաստատելով այն իրողությունը, որ ժամանակի ընթացքում, միֆոլոգեմները կարող են կորցնել իրենց բուն միֆոլոգեմային նշանակությունն ու գործառույթը, և ըստ դարաշրջանի ու հեղինակային ոգու (և, համապատասխանաբար, հայեցակերպի), ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխարկվել ոչ միֆոլոգեմային բառակապակցությունների՝ առաջին պլան մղելով բառի, արտահայտության, մակդրի և այլն, բանաստեղծական կամ գեղագիտական նշանակությունն ու հնչողությունը: Այս կապակցությամբ, տեղին է մեջբերել Կ. Լևի-Ստրոսի<sup>6</sup> այն դիտարկումը, որ «առասպելի գործառութային նշանակության չեզոքացման կամ կորստյանը զուգընթաց, այդ առասպելի հիմքի վրա ձևավորվում է արվեստը, որը նրա բովանդակային կառույցն օգտագործում է որպես ձևական նշանակություն ունեցող հենք՝ ըստ էության այն նոր բովանդակությամբ լցնելու համար» (*Эстетика: Словарь*, 1989:178):

Մանֆրեդի նույն տեսարանում, միֆոլոգեմային ալյուզիայի ցայտուն օրինակ է հետևյալը.

“Which walk the valley of the shade of death”.

«Որոնք քայլում են Մահու Ստվերի խոր ձորերի մեջ»:

«Մահվան Ստվերի... ձորը» արտահայտությունը, նախևառաջ, հուշում է, որ գործ ունենք աստվածաշնչյան ալյուզիայի հետ (տե՛ս Եսայի 9:2՝ «...ձեզ համար էլ, որ բնակում էք աշխարհում եւ մահուան ստուերների մեջ, լոյս պիտի ծագի», Մատթ. 4:16՝ «...եւ լոյս ծագեց նրանց վրայ, որ նստում էին մահուան երկրի եւ ստուերների մեջ»): Միաժամանակ, «Մահու Ստվերի խոր ձորը» վերաբերում է առասպելական Աիդ (Աիդես, Հադես, Պլուտոն) աստծուն պատկանող ստորգետնյա աշխարհին և մեռյալների թագավորությանը (Հադես), որը մեռյալների հոգիների (ստվերների) բնակավայրն էր (դիցաբանական բառարան, 1985:8-10):

«Մանֆրեդի» 3-րդ արարի, 2-րդ տեսարանում, ուշագրավ է Աստվածաշնչից վերցված հետևյալ բանաստեղծական ալյուզիան, որի կենտրոնը կամ առանցքը

«հսկաներ» միֆոլոգեմն է՝ ավանդված թե՛ անտիկ առասպելաբանությամբ, թե՛ Սուրբ Գրքով.

“...Glorious Orb! The idol  
Of early nature, and the vigorous race  
Of undiseased mankind, the giant sons  
Of the embrace of angels, with a sex  
More beautiful than they...”

«Ո՛վ գունդ փառահեղ, դու որ կուռքն էիր մանուկ աշխարհի,  
Առողջ մարդկության կորովի ցեղի, այն հսկաների,  
Որ սերած էին հրեշտակների գրկախառնումից  
Իրենցից անգամ սիրուն սեռի հետ...»:

Հունա-հռոմեական առասպելներում բազմաթիվ են աստվածների և աստվածուհիների ամուսնությունները մահկանացուների հետ: Այդ կարգի «խառնամուսնություններից» են ծնվել շատ հսկա-հերոսներ, օրինակ, Հերակլեսը (հայրը Չևսն էր, մայրը Ամփիարիոն քաղաքորի կինը՝ Ալկմենեն), Աքիլլեսը (հայրը Պելևսն էր՝ թեսալացի հերոսը, իսկ մայրը՝ ծովային աստվածուհի Թետիսը), Պերսևսը (հայրը Չևսն էր, որը ոսկե անձրևի տեսքով թափանցում է Պերսևսի ապագա մոր՝ Դանայայի մոտ) և այլն (դիցաբանական բառարան, 1985): Ուշագրավ են նաև աստվածաշնչյան հատվածները նման ամուսնությունների վերաբերյալ. «Երբ սկսեցին մարդիկ բազմանալ երկրի վրայ եւ դուստրեր ունեցան, Աստծու որդիները, տեսնելով որ մարդկանց դուստրերը գեղեցիկ են, կին առան նրանց, ում ընտրեցին...» (Ծննդ. 6:1-2): «Այդ օրերին հսկաներ էին ապրում երկրի վրայ: Երբ Աստծու որդիները մարդկանց դուստրերի հետ պառկեցին, իրենց համար որդիներ ծնեցին: Նրանք այն հսկաներն էին, որոնք հնուց ի վեր անուանի մարդիկ էին» (Ծննդ. 6:4):

Այն ամենն, ինչ ասվեց «խառն» տիպի դարձվածքների կապակցությամբ, կիրառելի է նաև մակդիրների, հատկապես, միֆոլոգեմային բնույթի (կամ այն մասնակիորեն պահպանած) մակդիրների, ընդհանրապես, մակդրավոր կապակցությունների նկատմամբ: Ուստի, բերենք այդպիսի մակդիրների այլ օրինակներ և դրանք ենթարկենք զուգադրական վերլուծության.

...Like an infernal god, from out the earth;  
His face wrapt in a mantle, and his form  
Robed as with angry clouds...” (Act III, scene IV)

Մի գեհենային աստվածի նման վեր է բարձրանում.

Գեմքը փաթաթած վերարկուի մեջ,

Եվ իր մարմինը կարծես բարկացայտ ամպերով պատած (արար 3-րդ, տեսարան 4-րդ)

«Գեհենային աստված» բառակապակցությունը յուրօրինակ է նրանով, որ բանաստեղծն այստեղ «միացրել» է (միավորել) երկու միֆոլոգեմ. մեկը՝ գեհեն մակդրի, մյուսը՝ աստված մակդրակրի գործառույթով: «Գեհենային»-ը, (ժամանակակից հայերենում այն կհնչեր ավելի շուտ «գեհենական»), թարգմանիչը (Հովհ. Մասեհյան) կիրառել է բնագրային infernal-ի (դժոխայինի) փոխարեն. պատճառը, մեր համոզմամբ, «դժոխային» ածականի համեմատ, «գեհենային» բառի առավել սաստկական հնչերանգն է, ապա, և, «վեր է բարձրանում» բաճակի առկայությունը, որը, կարծես, պահանջում է, որ երևացողը մի խորը տեղից

վեր բարձրանա. այդ խորը տեղը հենց «գեհեճն» է՝ կիրառված *դժոխք* իմաստով (եբրայերեն *Շեռ* և հունարեն *Հադես* բառերի հայերեն համարժեքը):<sup>7</sup>

«**Բարկացայտ ամպեր**» կապակցության մեջ միֆոլոգեմ են *ամպը, որոտը և կայծակը*՝ հունա-հռոմեական առասպելներում, *ամպերն*՝ Աստվածաշնչում, որպես **ամպի սյուն** («Աստուած ցերեկը նրանց առաջնորդում էր **ամպի** սիւնով, ..., իսկ գիշերը՝ հրէ սիւնով...»), Ելք 13:21-22), որպես **Աստծո փառք** («**Ամպը** ծածկեց վկայութեան խորանը, և խորանը լցուեց **Տիրոջ փառքով**»), Ելք 40:32-36), որպես Հիսուսի երկրորդ գալստյան ուղեկիցներ («...պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի **ամպերի** վրայով...», Մատթ. 24:30), «Ապա ես տեսայ մի սպիտակ **ամպ**. եւ **ամպի** վրայ նստել էր մէկը՝ նման մարդու Որդուն. նա իր գլխին ունէր ոսկէ պսակ... Եւ մի ուրիշ հրեշտակ ելաւ երկնքից, աղաղակեց բարձր ձայնով եւ ասաց. «Դու, որ նստած ես այդ **ամպի** վրայ, շարժի՛ր քո այդ գերանդին և հնձի՛ր, որովհետեւ եկաւ հնձի ժամանակը. եւ երկրի հունձն էլ հասած է: Եւ նա, ով նստել էր **ամպի** վրայ, շարժեց իր գերանդին երկրի վրայ ու հնձեց երկրի բոլոր բնակիչներին», Հայտն.14:14-16) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե.Վ.): Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է «բարկացայտ ամպերով պատած» «գեհեճնային» աստծո և «ամպի վրա նստածի», այսինքն, երկրի (ազգերի) հունձքը կատարողի միջև ընդհանրությունը *վախճան, բարկություն* խորհրդանշող ամպերի հետ: Այսպիսով, բայրոնյան «բարկացայտ ամպերով պատած» միֆոլոգեմա-արքետիպային կամ «խառը» տիպի բառակապակցության մեջ, նորություն է «բարկացայտ ամպեր» ("angry clouds") կապակցությունը, որն ունենալով վառ արտահայտված փոխաբերական (միֆոլոգեմային) բնույթ, օժտված է գեղագիտական որոշակի նպատակաուղղվածությամբ և «վիցքավորմամբ»: Այլ կերպ ասած, հնագույն արքետիպը «շարժվում» է և երևան է գալիս նոր լեզվակառույցի ու նոր ժամանակների մեջ, ինչը վերստին ապացուցում է այն միտքը, որ միևնույն բառը կամ բառակապակցությունը, տարբեր ժամանակներում և համատեքստով պայմանավորված տարբեր իրավիճակներում, կարող է հանդես գալ փոխակերպված, երբեմն նաև «դեֆորմացված» ձևով:<sup>8</sup>

Ավարտելով հոդվածը, հատուկ շեշտենք, որ Բայրոնի ստեղծագործության անբաժանելի մասը կազմող «խառը» լեզվաշերտերը (մասնավորապես, «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմում և «Մանֆրեդ» դրամայում), ինչպես նաև դրանց բանաստեղծական փոխակերպումները («տրանսֆորմացիա») և «դեֆորմացիաները», ունեն ընդգծված լեզվատրամադան գործառույթ, այսինքն, հանդես են գալիս որպես որոշակի լեզվատրամադան միջոցներ:

### **Ծանոթագրություններ**

1. Հայկական «Մասնա Ծոներ» (Ե., 1997) էպոսի պատումներից մեկում («Մասնա փահլիվաններ կամ թըլոր Դավիթ և Միեր», ասացող՝ Մոկացի Խապոյենց Չատիկ, բանահավաք՝ Բագրատ Խալաթյանց), առկա է երկնքից իջած պողպատե սյունը, որը Թուր Կեծակիով կտրում է Դավիթը.  
Տեսավ՝ Պողվրտե սուն երկնուց իջի գետի ն:  
Թուր էգարկ, կտրից... (էջ 387):
2. Աստվածաշնչի այլ թարգմանություններում (Մոսկվա, 1994), «գերանդու» փոխարեն «մանգաղ» է. «Ան որ ամպին վրայ կը նստեր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց ու երկիրը հնձուեցա» (Հայտն.14:16):

- Աստվածաշնչի անգլերեն տարբերակում (King James Version), ևս, ունենք «մանգաղ» (“And he that sat on the cloud thrust in his sickle on the earth...”):
- Նկատի ունենք, այնպիսի մակդրավոր կապակցություններ, որոնցում մակդրակիրը և միֆոլոգեմային և՛ աստվածաշնչյան լեզվաշերտերին պատկանող որևէ բառապաշարային միավոր է:
  - Աստվածաշնչում կյանք և ճանապարհ է ազդարարում Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ կեանքը...» (Հովհ.14:6): Մատնանշվում է երկու ուղի. մեկը՝ լայն և կորստյան տանող, մյուսը՝ նեղ, դժվարին, բայց փրկության առաջնորդող. «Մտե՛ք նեղ դռնով. ինչքան լայն է դուռը եւ ընդարձակ՝ ճանապարհը, որ դէպի կորուստ է տանում, եւ բազմաթիւ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքան անձուկ է դուռը եւ նեղ՝ ճանապարհը, որ տանում է դէպի կեանք, եւ սակավաթիւ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ.7:13-14):
  - Վարդը, որպէս հավատացյալների բազմության խորհրդանիշ, հանդիպում է, օրինակ, Դանթեի (Դանտե) «Աստվածային կատակերգության» մեջ.  
Այսպէս տեսքով բացված վարդի սպիտակ  
Ինձ երևաց այն սուրբ փաղանգը, որին  
Քրիստոս գնեցիր արյունով բովանդակ:  
(Դրախտ, 31-րդ երգ, 1-ին եռատող)
  - Կառուցվածքային մարդաբանության հիմնադիր, ֆրանսիացի ազգագրագետ Կ. Լևի-Ստրոսի գաղափարները, հետազոտական ծրագրերն ու նախնական առասպելի հետագա գեղագիտացման (էսթետիզացիայի) վերաբերյալ տեսակետը, հետագայում արտացոլվել է Գ. Գ. Շպետի, Պ.Գ. Բոգատիրևի, Օ.Մ. Ֆրեյդենբերգի, Մ.Մ. Բախտինի և այլոց հետազոտություններում: Կ.Լևի-Ստրոսի հիմնական աշխատություններն են. «Կառուցվածքային մարդաբանություն» (1958), «Վայրենիների մտածողությունը» (1962), «Առասպելաբանականը» (1964-1971), «Դիմակների ուղիները» (1975) և այլն:
  - Գեհեն կամ գեհոն է կոչվել Երուսաղեմից դեպի հարավ ձգվող հովտի (ձորի) այն նեղանձուկ մասը, որտեղ ժամանակին կռապաշտ հրեաները մանուկներ են զոհաբերել Մողոք (Մոլոք) կուռքի պատվին: Հետագայում, Հովսիա թագավորի օրոք, այդ տեղանքը դարձել է աղբանոց, սատկած անասունների և մահացած չարագործների կիզարան՝ Մողոքին նվիրված նախկին չար զոհաբերություններն անարգելու համար: Մշտավառ կրակի պատճառով «գեհենը» սկսել է ընկալվել որպէս «դժոխքի» խորհրդանիշ, իսկ հետագայում դարձել «դժոխք» բառի հոմանիշ (տես Քրիստոնյա Հայաստան հանրագիտարանի, դժոխք, գեհեն հոդվածը, էջ 273-274):
  - Դարձվածային միավորների և կայուն կապակցությունների դեֆորմացիայի մասին տես Смирницкий А. И. 1956, Тер-Минасова С.Г. 1968, Изотова А.А. 1992:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աստուածաշունչ, Մատեան Հին ԵՒ Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ԵՒ Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 2004:
- Բայրոն Ջ.Գ. Երկերի ժողովածու, Երևան, Հայաստան, 1965:
- Բոտվիննիկ Մ.Ն, Կոզան Մ.Ա., Ռաբինովիչ Մ.Բ., Սելեցկի Բ.Պ. Դիցաբանական բառարան, Երևան, Լույս, 1985:
- Դանտե Ալիգիերի. Աստվածային կատակերգություն, Երևան, ԵՊՀ, 1983:
- Կուն Ն.Ա. Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները, Երևան, Լույս, 1989:



